

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Օձի թունը և հակաթոյնական շիճուկը.—Մի հազուազիստ օպերացիա, —Թունաւորումն մազերի ներկով.—Վարակումն ափոէների, բաժակների, դանակի, պատուառքաղի և զգալի միջոցով.—Նիսախոսի պատմութիւնից:

Օձի թունը եւ հակաթոյնական շիճուկը.—Ամնաքը լսած են, որ ջերմ երկրներում ահազին քանակութեամբ զարհուրելի թունաւոր օձեր են ապրում, որոնց խայթոցը համարեա միշտ մահացու է։

Զարհուրելի օձերը վիստում են Հնդկաստանում ու աֆրիկայում, հասարակածի երկրներում ու կողմիների վրայ ու ամենատարի անթիւ զոհեր տանում։

Պաշտօնական տեղեկութիւններին նայելով միմիայն անզիփական արևմտեան կոլօնիաներում տարեկան 22,000 մարդ են մեռնում օձերի խայթոցից. բայց այս միայն պաշտօնական տեղեկութիւններն են, քանիսները անյայտ են մնում։

Գուցէ ամբողջ հողագնդի վրայ հարիւր հաղարների համար այդ զոհերի թիւը։

Բիւրաւոր տարիներ բժշկութիւնը անզօր է նզել խայթուածին օգնելու. Ամնասազդու միջոցը համարւում է կծած տեղը կրակով այրելը, բայց այդ էլ ընդհանրապէս չէր փրկում զոհին և մարդիկ շարունակում էին կոտորուել։

Սարսափելի է խածուածի դութիւնը. նա մի սուր ցաւ է զգում խածած տեղում, և համարեա անմիջապէս այդ կէտում սկսում է փառունու Փառունու այդ կէտից արագ տարածւում է վէրքի շուրջը և հիւանդն զգում է, որ կորած է Շնչառութիւնը դժուարանում է, բուզը սեղմուում է, ատամները կրծառում են ու բերանը փակում է, թարերախտաբար այս տանջանքները երկար չեն տեսում, և հիւանդը շուտով ուշը կորցնում է ու մեռնում թունաւորուած։

Մի գրանսոֆիական բժշկի էր վիճակուած օձի թոյնի հակա-
թոյնը դասնելը:

Բժշկութեան մէջ հակարոյն (antitoxine անտիտօկսին) կոչ-
ւում է այն հեղուկը, որը մանելով արևան մէջ ոչնչացնում է
տռաջուայ թոյնի զօրութիւնը:

Հակաթոյնը ստացւում է հետեւեալ կերպով.

Թոյնից (օրինակ օձի թոյնից) մի աննշան քանակութիւն
հալեցնում են որոշ քանակութեամբ ջրի մէջ ու սրսկում են
ձիու մարմնի մէջ: Սկսում են շատ թոյլ խառնուրդից և կոսմաց-
կամաց աւելացնում են թոյնի քանակութիւնը, որովհետեւ ձիու
օրդանիզմը սովորում է թոյնին և զի վնասուում: Այս ձեռով կա-
րևի է կենդանուն ընտելացնել և նրա մարմնի մէջ լցնել այն-
չափ թոյն, որը կարող է 200 չը սովորած ձի սպանել:

Այսպիսի (սրսկումներից յետոյ) ձիու արիւնը արդէն պա-
րունակում է մեծ քանակութեամբ հակարոյն, որից և օգտուում
են հետեւեալ կերպով.

Զիու մի երակը ծակում են ու հանում մի քանի լիտր
արիւն, այդ արիւնից զատում են շինուկը (արիւնը ըաղկացած
է շիճուկից) որը անդոյն հեղուկ է, և արեան գնդակներից,
որոնք և կարմիր դոյն են տալիս արեանը) ու լցնում փոքրիկ
սրուակների մէջ ու բնրանները խցում ու զմուռով ծածկում,
որպէս զի օդ չը մանի մէջը:

Այս սրուակներից մէկը բաց են անում ու միջի շիճուկը
առանձին սրսկիչով սրսկում խայթածի կաշու տակը: Այս սրս-
ռուակները մեծ քանակութեամբ ուղարկուում են օձաշատ
երկրները և արդէն 5—6 տարի է գործածութեան մէջ են և հա-
զարաւոր մարդկանց կեանք են փրկել:

Այժմ Հնդկաստան, Աֆրիկա ճամբորդողները իրանց պայ-
ուսակի մէջ ունեն այս սրուակներից և մի սրսկիչ: Այդ եր-
կրների մեծ կենտրոններում այդ միջոցը շատ ժողովրդականա-
ցած է:

Այս հակաթոյն շիճուկի գիւտը արել է բժ. Կալմիտ, որը
կիլ քաղաքի Պատուքօքեան Խնստիտուտի դիրեկտորն է (անօրէն):
Խնչպէս յայտնի է նոյն ձեռով ստացւում են և ուրիշ հիւան-
դութիւնների դէմ շիճուկներ՝ զիփակրիտի, ժանտախտի, իսկ նո-
րերս նաև տիֆի ու քութէշի (սկարլատինի) և մի քանի ու-
րիշ հիւանդութիւնների:

Իր լարօրատօրիայում բժ. Կալմիտը պահում է այդ նպա-
տակով ամեն տեսակ թունաւոր օձեր, ինքը կերակրում է նրանց
ու թոյնը հաւաքում:

Կերակրելը զոռով է լինում, որովհետեւ այդ սողումները

յօժարակամ ոչինչ չեն ուտում, երբ փակուած են վանդակում, այս պատճառով մէկը սեղմում է վիզները և ձու լցնում բերան-ները: Թոյնի հանելը կատարւում է այսպէս: Ինչպէս յայտնի է, թոյնը դոյանում է առանձին գեղձների մէջ, որոնց արտադրիչ խողովակը բացում է որոշ ատամների մէջ, այնպէս որ խածելիս թոյնը ասամի միջից իսկոյն լցում է վէրքերի մէջ, բժ. Կալ-միտը առանձին կապով ամրացնում է օձի զլուխը տախտակի վրայ և այսպիսով անվնաս դարձնում օճին, յետոյ սևզմում է թոյնաբեր զեղձը ու թոյնը գուրս ծորացնում ապակու: Կտորի վրայ: Այսպէս ստացած թոյնը իսկոյն չորացնում է ու նրանից վերև յիշած խառնուրդները շնուռւմ:

Մի նազուագիւս օպերացիա:—Ռոօդիկան և Դօօդիկան երկու փոքրիկ հնգիկ աղջիկներ են, որոնք իրար կպած էին ծնուած (երկուորեակ) և անբաժան ապրել էին 12 տարի:

Թիվի խսեցիք կը յիշեն այս հումակրելի դէմքով երեխաներին, որոնց ցուց էին հանել այստեղ երկու երեք տարի առաջ:

Այս բոպէիս նրանք բաժանուած են և բժշկում են Պարիզում:

Պարիզում նրանք հիւանդանում են և բժիշկները որոշում են բաժանել նրանց միմեանցից, որպէս զի կարողանան զոնէ մէկին փրկուլ:

Պարիզի յայտնի խիրուրգ Դուայէն, որը զարմանալի վարպետութեամբ ու արագութեամբ ամենագծուար օպերացիաներ է անում, յանձն է առնում այդ հազուագիւտ հատումը կատարելու:

Այս ձեփ օպերացիաները չափազանց հազուագիւտ են զիտութեան մէջ: Առաջինն արել է կիմնիդը 1689, 1866-ին Բէօմը բաժանեց իր երկուորեակ աղջիկներին, որոնցից մէկը կմնանի մնաց, 1882 այգափիսի մի օպերացիա արուեց Շվեյցարիայում, մէկն էլ 1900 թուականին արեց բժ. Պրիֆնս:

Բժ. Դուայէնը մնե հմտութիւնով, համարեա առանց արիւնասութեան, բաժանեց երկու երեխաներին: Պէտք էր կտրել կաշին կպածի երկարութեամբ, պէտք էր բանալ փորը, կտրել միացնող «կամուրջը», յետոյ կարել առնեն ինչ առանձին-առանձին:

Օպերացիան շատ յաջող եղաւ, բայց ցաւակցարար երեխաները վարակուած են տուբերկուլոզով, այսինքն համարեա բոլոր դործարանների և թոքերի մէջ գտնուել են առերկուուզի (թուքախտի) նշաններ, և խեղձները գուցէ երկար չապրեն, չը նայելով յաջող օպերացիային:

Թունաւորումն մազերի ներկով.—Պարիզում երկու բժիշկ երկար ժամանակ անյաջող կերպով բժշկում էին մի տիկնոջ, որը տանջւում էր սարսափելի զիսացաւից, սրտխառնութիւնից, փսխումից. նա քանի զնում, նիհարում էր, ուժասպառում էր և ոչ մի հնար չեր լինում նրան օգնելու:

Բժիշկները տարակուսուած էին, չեխն հասկանում հիւանդութեան պատճառը և չը զիտէին ինչին վերագրեն այս հիւանդութեան տոկունութիւնը, ու միանգամայն յուսահատուած էին, երբ մէկ օր նրանց զարմացնում է հիւանդ տիկնոջ մազերի արտասովոր սեռութիւնը և փայլը, որը անբնական էր մի 50 տարեկան կնոջ վրայ Խոկոյն կասկած ծագեց, որ հիւանդը ներկ է բանեցնում և անզաղար թունաւորում է իրան, որովհետեւ յայտնի է, որ մազերի բոլոր ներկերի մէջ թոյն կայ:

Յրանսիայում սև ներկը չափազանդ շատ տարածուած է, ծախւում է 50,000 շիշ, Այս ներկը քսում են մազերին և, որ աւելի երկիրզալին է, արորում են զլիսի կաշու մէջ, որպէս զի մազերի արմասներն էլ ներկունն Այսպիսի կանանց զլիսի մաշկը բարբարում է, պղուկներ է տալիս, բոր է ընկնում և այնու

Այս ներկի թունաւորիչ ազգեցութիւնը ուսումնասիրելու համար երկու բժիշկ փորձեր արեցին չների վրայ ։ Շները ուսում էին, փսխում անզաղար, աչքի կոսկերը ուռչում էին, կարմը-րում, և խնդէ կենդանիները նիհարում էին, հիւծում և վերջը սատկում: Եւ երբ բժիշկները հատում էին նրանց ներքին գործարանները, տեսնում էին, որ թոքերը, փայծաղը, լիրդը և միւս գործարանները սև էին ներկուած:

Վարակումն ափսէների, բաժակների դանակի, զդալի ու պատաւախոլի միջոցով.—Յայսնի պրօֆ. Էսմարիսի արած մի քանի փորձերը միանդամայն ապա, ուցեցին, որ այս առօրեայ գործածելի իրերի միջով շատ հեշտ կարող են տարածուել վարակիչ կոչուած հիւանդութիւնները նա փորձեր է արել յատկապէս թոքախտի հետ: Յայսնի է, որ վարակիչ հիւանդութիւնների պատճառը որոշ բակտերիաներ (միկրօբներ) են, որոնք անցնելով հիւանդից առողջին, տարածում են ցաւը:

Էսմարիսը պատառաքաղի վրայ աճնցնում է թոքախտի միկրօբները (բացիլները) և ապա մի բոլէ պահում է եռման ջրի մէջ ու շորով լաւ սրբում: Այնուամենայինիւ բացիլներից մնում են պատառաքաղի վրայ ու կարող են կերակրի հետ ներս գնալ Այստեղից պարզ է, որ վարակուած (հիւանդին ծառայած) իրերը լուանալով ու սրբելով աղտաղերծ չեն դառնում. նրանց

վրայ մնում է ու զարգանում է վարակիչ թոյնը, և կարող է վարակել նրանց գործ ածողին:

Այս հիման վրայ հիւանդի իրերը լաւ մաքրելուց յետոյ էլ պիտի թունաւորուած համարել և առանձին պահել ու առանձին էլ լուանալ Սակայն պրօֆ. Էսմարլսի փորձնորից երեսում է, որ այդ իրերն էլ կարելի է աղտաղերծ անել մի քանի բոպէ սօղայի խառնուրդի մէջ պահելով, որը պիտի տարացնել (աւելի լաւ է նապացնել), իսկ խառնուրդը պէտք է լինի 2 մաս սօղա 100 մաս ջուր (մի գդալ սօղա մի բաժակ ջրի մէջ):

Նիսախոսի պատմութիւնից.—Նիսախոտը առաջին անգամ երեսում է Սպանիայում (1559-ին) և այնտեղ սկսում է մշակուել 1561-ին Փրանսիացի ժան Նիկոտի ջանքերով և Եկատերինա Մեդիչի թոյլատութիւնամբ ծխախոտը սկսում է ներմուծուել Ֆրանսիա «Նիկոտիանա» անունով։ Նիսախոսի գործածութիւնը անգլիացիք սովորեցին ամերիկացիներից։ XVII դարի կիսում ծխելու սովորութիւնը ահազին ծաւալ ստացաւ։ ծխում էին նաև կանաքը, օրիորդները և նոյն իսկ մանուկները։ Մայրերը երեխանների ձեռը չիբուխ ու ծխախոտ էին տալիս և դպրոց ու զարկում, որովհետև ծխելու գիտութիւնն էլ դպրոցական պրօցրամի մէջ տեղ էր բանում։ Ամենքը ծխում էին, և ուր որ լինէր՝ եկեղեցում, պարագանենառում։ Նոյն դարում ծխախոսի գործածութիւնը մտնում է Ռուսաստան։

XVIII դարում մօղան անցնում է և ծխելը մինչև անգամ ամօթալի սովորութիւն է դառնում, սակայն ժողովուրդը միսիթարում էր իրան քթափոշի գործածելով և ծխախոտ ծամելով։ Սիգարի գործածութիւնը սկսուել է Եւրոպայում Ղրիմի պատերազմից յետոյ, որի միջոցին Ֆրանսիայի և Գրիմանսիայի զինուորները սովորեցին նրանց ծխելը տաճիկ զինուորներից։

Վ. Ա.